

գրիս եպիսկոպոսին: Եւ էր տէր Կիրակոս այս ի քաղաքէն Տրապիզոնայ, մտեալ ի կարգ աշխարհի, բայց ոչ վայելեալ, քանզի զկնի սակաւ աւուր վախճանեալ ամուսնոյ նորա. եւ ինքն մինացեալ իբր զտատրակ ողջախոհ. և հանապազօր խոկայր ի պատուիրանս Աստուծոյ. եւ ըն.» զարձեալ, ըստ նոյն պատմչին, տէր Կիրակոս Տրապիզոնէն Սաղմոսավանք կ'երթայ Սարգիս եպիսկոպոսի մօտ, որու մասին սակայն լսելով թէ՛ Երուսաղէմ մեկնած է, Տրապիզոն կը դառնայ, և ունեցածը աղքատներուն եւ Տրապիզոնի եկեղեցիին նուիրելով՝ կը մեկնի Երուսաղէմ եւ հոն կը միանայ Սարգիս եպիսկոպոսին եւ ուրիշներու հետ. (անդ. էջ 252): Սարգիս եպ. եւ Տէր Կիրակոս Երուսաղէմի վանքերուն կանոններու համաձայն կը փափաքին յարմար տեղի մը մէջ «անապատ» (վանք) մը հաստատել, այդ պատճառաւ կը շրջագային Երուսաղէմի յունական վանքերը, Յորդանանու եզերքները, Փորձութեան լեռը եւ այլուր, բայց Կիրակոս քհ. կը նախընտրէ Արևելեան աշխարհն երթալ և հոն հաստատել անապատը. ուստի մեկնեցան Երուսաղէմէն և գացին Սիւնիք, ու հոն հաստատեցին բաղձացուած վանքը: Մանրամասնութիւնները տեսնել (Դալիիմեցի, էջ 252-266): Կիրակոս քհ. նորահաստատ անապատին աշակերտներուն Ս. Գրոց եւ կրօնի ուսման դասերով կ'ըբաղէր, յետոյ իր կողմէն հաստատուած Հօզանց անապատը կը քաշուի, և ՌՀ. (=1621) թուականին կը վախճանի և հոն կը թաղուի: Այս Կիրակոս քհ. ի մասին տեսնել նաև (Դարսանաղցի, էջ 102):

ԿԻՐԱԿՈՍ (մհտ.) ՔԱՐՈՒԿԵՆՅ, ԲԻՆԿԵԱՆՅԻ. — 1867 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ վանքը: 1872 ին իր ծախքով Ս. Յակոբի վանքին տպարանին մէջ կը հրատարակուի Մեղքիսեղեկ վրդ. Մուրատեանցի Պատմ. Հայաստանայց Առաք. Ս. եկեղեցւոյ անուն դասագիրքը ժառ. վարժ. ի համար: Մհտ. Կիրակոս Քարուկեանցի 1868 ին վանքին կտակած քսաներեք Բոնսուլիտներուն փոխարէն, վանքը տարեկան 300 դրշ. ի եկեղեցական գրքեր զրկել կ'որոշէ Ակնայ Բինկեան և Ձմառ գիւղերու եկեղեցիներուն: Յիշեալը Ս. Յակոբի վանքին կը նուիրէ արծաթեայ խոշոր ոսկեղօծ *անանց* մը սա յիշատակաբանով. «յիշատակ է Բինկեանցի Քարուկեանց մհտ. Կիրակոս ազայի վասն հանգուցեալ ծնողացն Երեմիայի եւ Հովիթիսի եւ